ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«03» հոկտեմբերի 2017 թվականի № 122-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2017 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի մոտ տեղի ունեցած քննարկման արդյունքներով՝ Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերը միացնող 400 կՎ լարման հանգուցային ենթակայանի կառուցման համար Դդմաշեն համայնքում նախատեսված տարածքի այլընտրանքներն ուսումնասիրելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Ա.Բաղդասարյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն (խմբի ղեկավար),

Մ.Մնացականյան - «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն,

Մ.Ջալալյան - «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն,

Ռ.Եղոյան - «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն,

Վ.Խաչատրյան - «ՀրազՋԷԿ» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ),

Ռ.Խաչատրյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրեն,

Գ.Բալյան - «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ,

Գ.Ղազարյան - «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր ճարտարագետ,

Ա.Մնացականյան - «ՀրազՋԷԿ» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),

Լ.Մնացականյան - «ՀրազՋԷԿ» բաց բաժնետիրական ընկերության էլեկտրաարտադրամասի պետ (համաձայնությամբ):

2. Աշխատանքային խմբին՝ Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերը միացնող 400 կՎ լարման հանգուցային ենթակայանի կառուցման ծախսերի օպտիմալացման նպատակով, համագործակցելով «Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» ծրագրի խորհրդատու Fichtner ընկերության և «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հետ ուսումնասիրել և մինչև 2017 թվականի հոկտեմբերի 25-ը ներկայացնել առաջարկություն՝ 400 կՎ հանգուցային ենթակայանը Հրազդան ՋԷԿ-ի ԲԲՍ-ի հարակից տարածքներում (գործող ենթակառուցվածքների օգտագործմամբ) կառուցելու հնարավորությունների ու տեխնիկական լուծումների վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հ.Հ.Հարությունյանին:

/ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ